

Յուսիկ սրբազանը իւր թարգմանութեան սկզբում տուել է երկէջեան մի բովանդակութիւն և վերջն էլ յատուկ անուանց ցանկ, որ չունի ուսերէն թարգմանութիւնը: Սրբազանի այդ նորութեան շնորհիւ հայերէն թարգմանութիւնը դորձածութեան համար կարևոր է դառնում ոչ միայն ուսերէն շիմացողներին, այլև իմացողներին, որոնք արարերէնի որևէ յատուկ անուն որոնելիս անմիջապէս կարող են գտնել և ոչ միայն հայերէն այլև ուսերէն թարգմանութեան մէջ, քանի որ հայերէնում նշանակուած են ուսերէնի ոչ միայն բնագրի այլև ծանօթութեանց էջերը. հանդամանքներ, որ լաւ մտածուած են:

Ս. Կանայեան



II

Н. Марръ.—Грамматика чанскаго (лазскаго) языка,
С. П., 1910. էջ XXX+240. գրին 2 ս.

Իր բաղմաթիւ գիտական աշխատութեանց վրայ պրոֆ. Մարր վերջերս սակայրեց լազերէնի քերականութիւնը:

Լազերէնը հարաւային Կովկասեան լեզուախմբին պատկանող մի լեզու է, որ ամենամօտիկ խնամութիւն ունի վրացերէնի, իմերեղերէնի, մինգրելերէնի և սվաներէնի հետ: Այս լեզուն խօսում են լազերը՝ Նրանց հայրենիքն է Լազիստանը (հին անունով՝ Լազիկա), որ գտնւում է Սև ծովի եզերքը՝ Բաթումից սկսած մինչև Պատանա: Լազերը բաժանւում են երկու մասի. յոյն լազեր, որոնք յունադաւան են և խօսում են յունարէն, և բուն լազեր, որոնք դաւանում են մահմետական կրօնը և խօսում են լազերէն կամ թուրքերէն: Լազախօս լազերը բաւական սակաւաթիւ են և այս լեզուն հեռզհեռէ կորչելու վրայ է՝ տեղի տալով թուրքերէնին: Լազերէնը նաև գրական լեզու չէ եղած բնաւ, այսինքն որ և իցէ ժամանակ գրով աւանդուած չէ մեզ: Մինչև այսօր էլ լազերը գիր

չունին, և քրդերի կամ կովկասեան շատ վայրենի ազգերի նման, որ երբ և իցէ բան գրելու պէտք ունենան, գրում են բուրբերէն լեզուով:

Առաջին անձը՝ որ հետաքրքրուել է լազերէն լեզուով՝ Klaproth-ն է. որը 1823 թուին իր Asia polyglotta աշխատութեան մէջ հաւաքել և հրատարակել է հալիւրի շափ լազերէն բաներ: Աւելի յաջող է գերմանացի Ռօզէնը՝ որ 1843-ին հրատարակում է լազերէնի համառօտ քերականութիւնը և 500-ի շափ բաների մի ցուցակ: Նրան յաջորդում են անգլիացի հիւպատոս Peacock և գերմանացի պատոն Ereckert, որոնք նոյնպէս հրատարակում են լազերէն բաների հաւաքածոյք:

Լազերէնի մէջ գտնելով հայերէն լեզուի ուսումնասիրութեան համար հետաքրքիր բաներ ու ձևեր, ես ես փափագեցայ ուսումնասիրել նոյն լեզուն: 1894 թ. Պօլսում և 1895 թ. Կարինում ծանօթանալով լազերի հետ՝ սովորեցի լազերէնը, հաւաքեցի շատ նիւթ և այս բոլորը հրատարակեցի 1898—9 թուերին, ֆրանսերէն լեզուով: Աշխատութիւնս տպագրուեց նախ Պարիզի լեզուաբանական ընկերութեան ժողովածոյքի մէջ և յետոյ առանձին հատորով (H. Adjarian, Etude sur la langue laze), ուր ամփոփուած է լազերէն բառարան (մօտ 2000 բառով), լազ բարբառների համեմատական քերականութիւն, խօսակցութիւններ և ժողովրդական երգեր: Աշխատութիւնս պարունակում էր նաև նախորդ բոլոր հեղինակների գործերի ամփոփումը:

Վերջին անգամ սրտֆ. Մառը իր ուսումնասիրութեան առարկայ է դարձնում լազերէնը, որովհետև վրացագիտութեան համար ներկայացնում է անհրաժեշտ նիւթ: Նա ճանապարհորդում է Լազիստան և մի քանի ամիս մնալով այնտեղ՝ ուսումնասիրում է լազերէնի բարբառները, և իր ուսումնասիրութեանց արդիւնքը հրատարակում է վերոյիշեալ ընդարձակ հատորով, որի մէջ պարունակւում է բաւական խղճամիտ կերպով պատրաստուած բառարան, քերականութիւն և լազերէն հատուածների հաւաքածոյ: Աշխատութիւնը գերազանցում է իր բոլոր նախորդները, որ նրա մօտ այլ ևս ստանում են պատմական նշանակութիւն: Պր. Մառը իր գրքի մէջ օգտւում է իմ աշխատութիւնից, որից փոխ առանձները առհասարակ առանձին չի յիշում, բայց առանձնապէս յիշում և քննադատում է այն՝ որ համարում է սխալ կամ կասկածելի: Ֆրանսիական Journal Asiatique թերթին ուղարկել եմ արդէն մի բաւական մանրամասն քննադատական, ուրախ աւելորդ եմ համարում այստեղ խօսել այդ մասին:

Կայ մի կէտ սակայն, որ հայերէնի համար առանձնապէս հետաքրքիր է: Դա լազերէնի մէջ գտնուած հայերէն բաների հարցն:

է: լազերէնը շատ փոխառութիւններ ունի թուրքերէնից, յունարէնից, իտալերէնից, հայերէնից և մինչև անգամ ուսերէնից: Պր. Մառը աշխատում է նշանակել այս զանազան փոխառութիւնները, բայց մեծ մասը թողնում է առանց բացատրութեան: Հայերէն բառերից մի փոքր մասը միայն նշանակուած է: Իմ քննադատականիս մէջ մատնանշել եմ սր. Մառի պակաս թողածները, բացի հայերէններից, որ ուզում եմ ներկայացնել այժմ Արարատի ընթերցողներին:

Լազերէնի մէջ դանուած հայերէն բառերը ծագման կողմից երեք տեսակ են:

ա. Բառեր՝ որ լազերէնը փոխ է առել հայերէնից ուղղակի կամ մի երրորդ լեզուի միջնորդութեամբ:

բ. Բառեր՝ որ հայերէնը լազերէնից է փոխ առել:

գ. Բառեր՝ որ ընդհանուր են կովկասեան լեզուներին, հետևաբար հայերէնն էլ՝ եթէ այս բառերը փոխ է առել, կարող է կամ լազերէնից և կամ մի ուրիշ կովկասեան լեզուից փոխ առած լինել:

Այն օրից՝ երբ սր. Մառը երևան հանեց յարեթական լեզուախմբի հարցը, փոխառութեանց խնդիրը ծանր կերպարանք ստացաւ: Նախապէս կարծուած էր, թէ այս կարգի բառերը՝ գրեթէ անխափր՝ փոխառութեամբ անցած են հայերէնից կովկասեան լեզուներին. ընդհակառակը սր. Մառը համարում է, որ սրանք թէ հայերէնի և թէ կովկասեան լեզուներին հասարակաց բառեր են (յարեթական ցեղակցութեամբ յառաջացած): Որովհետև յարեթական լեզուախմբի գաղափարը գիտութեան մէջ ընդունուած չէ, ուստի մենք միանգամայն մերժում ենք այս բառերի ցեղակցութիւնը և հաւատացած ենք՝ թէ դրանք բոլորը փոխառութիւններ են, կամ հայերէնը կովկասեաններից վերցրած, կամ կովկասեանները հայերէնից վերցրած, և կամ հայերէնը Խալդեանների լեզուից, որ նոյնպէս կովկասեան ճիւղին էր պատկանում ըստ Մառի: Բայց յատկապէս որոշել իւրաքանչիւր բառի ծագումը ներկայ միջոցներով մեծ մասամբ անկարելի է:

Ահաւասիկ հայ և լազ բառերի համեմատական ցուցակը.

1. Համբաւ. լազ. ամբաի շուր, տեղեկութիւնս:
2. Անսեր. լազ. անդերի, այս բառը գործ է ածուած լազերէն մի երգի մէջ, որը սովորել եմ Աթինացի մի լազից. Սեուալիթի ճամու օրե, քալե, մի՞՞՞ աճդերի. լազերն այս տողը թարգմանում էին «Գեղեցիկ գլուխ՝ որ ես, ո՞վ աղջիկ, դու որի կէսն ես». (կես ասելով լազերը հասկանում էին «կին, կողակից»): Պր. Մառը յայտնում է, թէ իր լազերը չգիտեն այսպիսի նշանակութիւն և նոյն տողը թարգմանում է «Դու ինչպէս գեղեցիկ ես, ո՞վ աղջիկ»:

ինչո՞ւ գու աճաէր ես». այսպէսով բառը համարում է հայերէնից փոխ առնուած, ինչպէս է նաև թրքերէնի մէջ:

3. Բակ. լազ. բակի «ախոս»:

4. Բարդ. լազ. բարդի «խօտի գէղ»:

5. Բազխել. լազ. բախ «ծեծել (մարդ կամ ցորեն)». հայերէնի մէջ էլ իսկական արմատն է բախ, ինչպէս ցոյց է ապրիս բաբախել կրկնականը:

6. Բոզ. լազ. բոզո «աղջիկ». գտնուում է նաև միւս կովկասեան լեզուներում. հայերէնի նշանակութեան տարբերութեան պատճառաւ կարծում եմ, որ բառը նիւթին հետ կովկասեաններից մտել է Հայաստան: Այս կէտը շատ նշանաւոր է ազդագրական տեսակէտից, որովհետև մեր պոռնիկ ու կաւաս բառերն էլ հայերէն ծագում չունին և փոխ առնուած են առաջինը յունարէնից, երկրորդը արաբերէնից:

7. Բողկ. լազ. բուլեկի, բուլենի «բողկ»:

8. Գւռ. բիբի «հօրաքոյր» (Ղարաբաղի բարբառով). լազ. բիբի «հօրաքոյր»:

9. Պանդոյր. լազ. բունդուրի «ծոյլ, դատարկասորատ»:

10. Բոււտ, որից փամփուտ, լազ. բոււտի «միգալիամիտուշտ»:

11. Բու. լազ. բու «բու»:

12. Կիզում. լազ. գգ «այրել, վառել»:

13. Գոռալ. լազ. գուր «գոռալ, հայհոյել»:

14. Գուբ «աղբիւրի ծորակ, ջուրը վազելու խողովակը». այս իմաստով գործ է ածուած պղատ, օրին. նոյնպէս է նաև լազ. գուբի:

15. Տի— «մեծ» նշանակութեամբ կայ skr (տի-այր), տիկին, տիեզերք բառերի մէջ, հմմտ. լազ. դիդի «մեծ, շատ»:

16. Տուտն, տտուն «պոչ, ծայր», գւռ. տուտ «ծայր», լազ. դուդի «գաղաթ, ծայր»:

17. Առեակ կամ ուռեկ «արջ կամ եղնիկ բռնելու թակարդ», որի հետ հմմտ. նաև առկան «ձուկ բռնելու ցանց». լազ. երեկի, իրեկի, երեմի «թռչուն որսալու ցանց»:

18. Վանձնաս, գւռ. վազնաս. լազ. վազնակի «սլանիր պատրաստելուց յետոյ կաթից մնացած ջուրը չորացնելով շինուած նիւթը»:

19. Մուզի. լազ. մուզարի «էգ հորթ», վրաց. մոզվերի «հորթ»:

20. Թեր «կողմ». լազ. բերե «կողմ», իրիք բերե «ամէն կողմ», չուեփեք բերե «մեր կողմը»:

21. Թերմոն «մի տեսակ գինի». լազ. բերմոնի «խաղողի հիւթով պատրաստուած ուտելիքէն». երկուսն էլ յունարէնից առնուած:

22. Կապին. լազ. կապիծի «մի տեսակ շափ է»:

23. Կրակ. լազ. կերա, վրաց. կերա, կերակի «կրակ»:

24. Գւռ. կլմբուր, կլիմբուր «երդիկից կախուած շղթայ՝ որի ծայրին անց կացնելով կաթսան՝ կերակուր են եփում. գործ է անում կապարայի փոխարէն», նոյն իմաստն ունին լազ. կերեմուլի, կերեմուլի, կեմուլի, կլեմուրի, լեմուրի:
25. Կրկիս. լազ. կերկեսա «կարծր ընկոյզ»:
26. Կիր. լազ. կիրի:
27. Կոպալ. լազ. կոպալի «բուրդ ծեծելու փայտ»:
28. Կոն. լազ. կոնի, կոննի «տաքի կոճ»:
29. Գւռ. լազուս «եղիպտացորեն», լազ. լազուսի:
30. Լակոս «չան ձագ», լազ. լակի, լափի, լանի «չուն», լակոսի «չան ձագ», հայերէնը փոխառեալ է կովկասեաններից:
31. Աղբ «կեղտ», լազ. լեբի «կեղտ», լեբ «կեղտառել», լեբոնի «կեղտառ», հայերէնի մէջ ա ձայնը յաւելուած է, որովհետեւ ղ-ով սկսուած բառ չունինք, պարզ արմատը պահում է դեռ Ղարարաղի բարբառը՝ լեպ ձևով «հիւանդութեան ժամանակ լեզուի վրայ գոյացած կեղտը»:
32. Մանգաղ. լազ. մանգալի:
33. Գւռ. մանկուր «արջառները մսուրին կապելու շղթայ», նոյն նշանակութիւնն ունի նաև լազ. մանգուրի, մանգուրէ:
34. Գւռ. մոլ «անձրեկից առաջ տիրող հեղձուցիչ սաւք», լազ. մոլա «տաք»:
35. Մխալ (մուխ արմատից). լազ. մղ (մղոււս, մղուփս) «առանց բոցի այրուել» (անշուշտ հայերէնից է):
36. Գւռ. նե, նը «եթէ», միջին հայ. նայ. լազ. նա «եթէ»:
37. Գւռ. րխել «զարնել, ծեծել», լազ. նրխ, մունրխափու «զարնել, ծեծել»:
38. Հայելի, գւռ. հայլի. լազ. եալի «հայելի», 2. դիտակ», թուրքերէնի մէջ էլ այնա «հայելի» բառը գաւառներում գործ է անում «դիտակ» նշանակութեանը: Փոխառեալ է հայերէնից:
39. Պաղասիլ. լազ. պալախար, օպալախարու «խնդրել, աղաչել»?
40. Ժանգ. լազ. մժանգի, ջանգի «ժանդ», ժանգերի «ժանդոտ»:
41. Տաւար. լազ. տալարի «արջառ»:
42. Սարեակ. լազ. սուրիկի «նոյն նշ.»:
43. Տփալ. լազ. սփալո «թթու»?
44. Տաղախ «չաղախ», լազ. տալախի, տոլոփի «ցեխ»:
45. Գւռ. տեփուր «փայտէ կլորակ փոքրիկ սեղան», 2. հատեղէնները մաքրելու փայտէ կլոր մատուցարան», լազ. տեփուրի «լազերին յատուկ մի տեսակ կլոր սեղան, որ ունի մէկ կարճ ոտք»-հմմտ. նաև պրս. tafür «անօթք քարեղէն և խնցեղէն»:
46. փայծաղ. լազ. փանծալա, փածալա.

47. Գւռ. փափա «հաց (մեկ.) 2. ձաւարով խաշիլ». լազ. փափա «կաթնապուր». վրաց. փափա «խաշիլ»:

48. Փինի. լազ. փիննո «մի տեսակ եղևին»:

49. Փրփուր. լազ. փոփոթի, փոփոշի?

50. Գարի. լազ. ֆերի:

51. Քօս «այծ». սրանից փոխառնալ են լազ. ֆօսաթի «ուլիկ». վրաց ֆօսիկի:

52. Գղակ. լազ. ֆուդի «գլխարկ», հայերէնը ունի նուազական մասնիկ:

53. Կրուկ, որ և կրունկ. լազ. ֆուրի «տաքի կրունկ, գարշապար». հայ բառը կարող է կազմուած լինել կուր արմատից՝ ուկ նուազականով:

54. Գւռ. կլեպ. լազ. դլեպա «ընկոյզի կանաչ կեղև»:

55. Շերեփ. լազ. շերեպի «մեծ գդալ»:

56. Շիրիմ «գերեզմանաքար». պարզագոյն իմաստին են նայում վրաց. շիրիմի «միզաքար», շիրիմիս ֆուա «չեչաքար», լազ. շիրիմի «ծովի կամ գետի աւազ»:

57. Զսնչ լազ. շոնչի «եզիպտացորենի տերև»?

58. Ոչխար լազ. շխուրի «ոչխար». փոխառուն հայն է. բնիկ հայերէն բառն է օդի:

59. Յանց, համա. լազ. ցանցա «խաղող են. հաւաքելու յատուկ կողով»:

60. Գւռ. հեսիկ, խեսիկ «ձիւնի վրայ քայլելու համար առանձին տեսակի կօշիկ». լազ. խեդիդի:

61. Սուս. լազ. ցուդի?

62. Մոնթ «կրօնաւորի քով փոքրաւոր, աշակերտ, աւելի ընդհանուր նշանակութիւն ունի լազ. մոնթա, մոթա, մոթալի «անասունի ձագ. 2. թոռ, մէկի որդու որդին». ցխեցիւթ մոթալի կամ ցխեցիւթ մոթա «քունակ», բոզմոթա «փոքրիկ աղջիկ»:

63. Զար. լազ. ծարի «ձիու պոչի մազ. 2. բաշով շինուած ցանց»:

64. Գւռ. խերխու.ֆս «սղոցած փայտի փոշի». լազ. խերխի «սղոց». հայը փոխ առած է վրացերէնից:

65. Խենեպ. լազ. խենեպա «կաղինի կեղև»:

66. Խիզար «սղոց». լազ. խիզարի:

67. Գւռ. ծուաղ «գափնեկեռաս, prunus laurocerasus կոչուած պտուղը, որ առատօրէն աճում է Բաթումի և Տրապիզոնի շրջանում. դառնահամ պտուղ է. տեղացիք շատ են սիրում». լազ. ծու, մծու, մծկօ. Բաթումի մահմետական վրացիները գործ են ածում ծղավի, որ բոլորի մայրն է:

68. Ածուխ. հնագոյն ձևն է ածուղ. լազ. ծուլա, մծուլա «մուր»:

Պօլսոսում ծածկակերպում մութ նշանակում է «ածուխ»:

69. Ծուծ, ծծել, լազ. ծուծոցու «ծծել», բուծոցի «ծծեցի»:

70. Գւռ. ծուկալ «կաւով շինուած նեղարերան սափոր», լազ. ծուկալի, նուկալի, նուկանի «կաթսայ», թրք. շուֆալի «գիշերային աման»:

71. Գւռ. նուկ «կերակուր եփելու աման», լազ. նուկի «կաթսայ»:

72. Գւռ. ծոց «ծառի երեսից քերծուած մաշկի երկար շերտեր՝ որով կողով են հիւսուած», լազ. նուցու «ցանկապատ հիւսելու ճիւղեր»:

73. Ծեհ «փոքրիկ», նուհ «վառեակ», լազ. նուհա, ծուհա, նիհա «փոքրիկ»:

74. Խազ «գիծ», լազ. խազ «գիծ քաշել»:

75. Խազար «ցից?» (մէկ անգամ գործածուած է ըուզ. Գ. 8). հմմտ. լազ. խազարի «գաւաղան», վրաց. խազարի «ցից»:

76. Գւռ. խաչասուր (կիւմիւշխանէի գաւառականով նշանակում է մի տեսակ տանձ), նոյն է նաեւ լազ. խանանուրի:

77. Խաղխամ «սանդուխքի ճաղեր», կրկնուած է անծանօթ խաղ ըստից. հմմտ. լազ. օխիլի «կամուրջի ճաղերը»:

78. Գւռ. խուցանալ լազ. խին, օխիու «գծգունիլ, գոյնը գցել»:

79. Խոփ. լազ. խոպի «թի, թիակ (փորելու և նաւի)»:

80. Խարակել, խարկել. լազ. խրակ «խորովել»:

81. Ջախջախել. սարդ արմատն է ջախ. լազ. ջախ «մուրճով գարնել»:

82. Մսուր. լազ. օսնֆսուրա, օսխսուրա «մսուր»:

2. ԱճԱՌԵԱՆ

